է դաշտաց, ցորենի և այլոց բուսականութեանց, որով մեծալուտ սովը սարսափեցուցած է զժողովուրդը։ Այլ Տիրամոր Պատկերն 'ի Կամենից դառնալուն պէս, բարեխօսութեամբ Երկնից Թագուհւոյն, ուրախարար ցօղը կ'իջնէ յերկիր, առատ անձրև կը թափեն ամպերն. կը յազի երկիրն, կը կենդանանայ և կը ծաղկի։ Ուրախութեամբ կը լեցուի մարդկանց սիրտը, տեսնելով որ Բաշխողն երկնաւոր ողորմութեանց խնդրեց յԱստուածորդւոյն՝ ժողովրդոց կարեւորը։ . . .

Զեռք կը զարնեն Հայք նորոգելու Ս. Նիկողայոս եկեղեցին. կարեւոր ատաղձը արագ կը պատրաստեն, գործաւորք անվարձ կ'աշխատին, հարուստ և պաշտօնավար անձինք իրրև վարձաւորք կը հայթայթեն կարեւոր պէտքը։ Նոյն իսկ կանայք և տիկնայք ամէն դասակարգէ պատիւ անձանց կը համարին մասնակցիլ գործոյն։ Մեծի պատուոյ արժանաւոր մեր մամերն՝ յօժարութեամբ կրած են աղիւս, աւազ և կիր, չնայելով ամենևին ոչ ամառան տաքուն, ոչ անձրևի և ոչ այլ օդոց խառնակութեան։ Տաճարիս վերանորոգութիւնն աւարտած է 1767 ին, և նոյն տարին բերուած է Աստուածամոր հրաշագործ պատկերն 'ի մատրանէ Աւետման, յեկեղեցիս Հայոց, յոր կը պաշտի ցայսօր։— Ազգիս աւանդութիւնք անընդհատ կը հաչակեն զսքանչելիս Երկնից Թագուհւոյն. — այն սքանչելիք կենդանի պահուած են ազգայնոց սրտին մէջ, և մշտնջենաւոր պիտի մնան աւանդութեամբ, թէ ինչպէս Սրբուհի կոյսն հասած է օգնութեան՝ ժանտամահի միջոց, բժշկած է ախտաժետս և խեղանդամս, օգնած է դժբաղդութեան և ցաւոց միջոց, 'ի սովու և 'ի պատերազմի. դարձեալ թէ